

նուան տակ առժամեայ վարիչ մը սահմանել Մուրատեան վարժարանի՝ հանրութեան առջեւ: Այս պարագաներուն տակ էր որ կ'ընտրուէր Հ. Օրսենտիոս՝ փոխ-Տեսուչ Մուրատեան վարժարանի: Պաշտօնական ձայնը հետեւեալն է. «Գարձ վ. Հ. Ղեւոնդեայ Տեսչի վարժարանիդ այսրէն վաղ իսկ որոշեալ գոլով, որպէս գիտէք, խողովս մեր փոխանակ նորա կարգէ գրեզ առ այժմ փոխանակ Տեսչի (Vice - Directeur) յանձն առնելով ի քեզ զՏեսչութիւն վարժարանիդ և զմատակարարութիւն նորին, և գրեզ ինքն ճանաչէ պատասխանատու բարեկարգութեան և բարեյարմար ընթացից նորին և դաստիարակութեան մանկտոյն» (հմկ. Հիշում. Արքանօր առ Հ. Օրսենտիոս, 1861 Սեպտեմբեր 29): Կը ճանչցուի ուրեմն Տեսչի բոլոր իրաւասութիւններով, որով «ինքն է է երաշխաւոր ամենայնի առաջի Միաբանութեանս» (հմկ. Հիշում. Արքանօր առ Հ. Գրիգորիս Մերձանձեան և Հ. Սոքրիսս Պարոնեան, 1862 Յուլիս 16): Անկէ վերջ «Փոխատեսուչ»ը - ինչպէս կը կոչուի շատ անգամ - յաճախ «Տեսուչ» անուամբ եւս յիշատակուած է թէ՛ պաշտօնական և թէ՛ անպաշտօն թղթակցութեանց մէջ:

Թէ անիկա միշտ պատասխանատու գլխաւոր վարիչ ճանչցուած է Փոխատեսուչ պաշտօնական տիտղոսին տակ իբրեւ Տեսուչ վարժարանին՝ փաստեր կան իր մէջ մի տարիներէն, զոր օր. Հիւրմիւզեան Աբբասօր նամակներէն՝ Առ Գերպ. Եղուարդ Հիւրմիւզ, 1861 Նոյեմբեր 25. Առ Հ. Պետրոս Մինասեան, 1862 Յուլիս 14. Առ Հ. Գրիգորիս Մերձանձեան, 1863 Մարտ 15. Առ Հ. Օրսենտիոս, 1864 Փետրուար 22: Հուսկ՝ ահա շատ փաստացի յայտարարութիւն մը. կը գրուի իրեն. «Պաշտօնարարք ի վարժարանիդ... ամենեքին ընդ քեւ, և ըստ կանոնին տուելոյ Տեսուչն է գլուխ ամենայն պաշտօնատեարց դպրոցին և երեսփոխան Աբբային և ժողովոյն խնամակալաց, վասն որոյ հրամանաւ և զիտութեամբ նորին գործեսցին ամենայն ինչ ի վարժարանի» (հմկ. Հիշում. Արք.ի առ Հ. Օրսենտիոս, 1863 Փետրուար 18):

Օրինակիս մէջ յիշուեցաւ «ԵՆԱՄԱՆԱԼՈՅ ԺՈՂՈՎ» մը, որ 10 ձեռնհաս անձերէ բաղկացած էր 1843-ին՝ որոշողութեամբ Ուխտիս վարչ. ժող.ին: Տրուած է իրեն Յունվ. 3-ին առանձին կառնակարգներ: Նպատակն էր «հաստատութիւն ուղիղ կարգաց և ի բարւոք յառաջագիմութիւն վարժարանաց երկրոցունց, առ ի ժամանել ի ցանկացեալն վախճան որ է լուսաւորել զագոյն յամենայնի»: Այս ժողովը տեւած է մինչեւ 1846. անկէ յետոյ անձերու սակաւութեան կամ պարագաներու բերմամբ հետզհետէ անցած է նախ վարչ. ժող.ին, ապա Տեսուչներուն. երբեմն ալ փոփոխութիւններով կոչուած է Հոգաբարձոցաց ժողով, և հուսկ՝ Ուսումնական ժողով:

Հ. Օրսենտի վարչութեան ժամանակ յիշատակելի դէպք մը տեղի կ'ունենայ: Օսմանեան կառավարութիւնը կը պատուէ Մուրատեան վարժարանը. «Թերեւս ընթերցայք - կը գրէ Հ. Օրսենտ - յօրագիրս Պօլսոյ ի հայ, տաճ. և գաղ. մեծարեալ այս առաջին անգամ զՈւղղիչ և զՈւսուցիչս վարժարանին օսմանեան պատուանշանօք Մէճիտիէի» (գր. առ Հիւրմիւզեան Արքանօր, 1864 Փետրուար 13): Քիչ մ'աւելի մանրամասն կը դնէ Հ. Գրիգորիս Մերձանձեան, թէ «առաջարկութեամբ Օսմանեան Գեօպանին... այսր առաքին ի Պօլսոյ Մէճիտիէ առ մեզ չորեցունցս. զՉորրորդ աստիճան առ վ. Հ. Օրսենտ և զՀինգերորդն առ մեզ երեցունցս (որոնք են Հ. Պետր. Մինասեան, Հ. Գրիգ. Մերձ. և Հ. Սոքրիսս Պարոնեան) և այլոց երկց արտաքին վարժապետաց» (գր. առ Հիւրմ. Արքանօր, 1864 Յունուար 27):

2. Թուականս համաձայն է Հիւրմիւզեան Աբբասօր նամակին. (գր. առ Հ. Մաղաքիս Յովնան-ճիւնեան, 1865 Օգոստոս 11): «Հ. Օրսենտիոս որ կատարեաց զսահմանեալ ամս տեսչութեան իւրոյ» (հմկ. Հիշում. Արք. առ Հ. Աղիբա. Պէշիկպաշեան, Բարիզ 1865 Յուլիս 26)՝ ճիշդ նոյն օրը Պոլիս կը մեկնի, միասին տանելով աւարտավարժ աշակերտներն ալ: Հոն կը մնայ՝ ի բուժութեան իր տկալութեան, որմէ շատ կը նեղուէր ի Բարիզ: Վարժարանին առժամեայ վարչութիւնը՝ մինչեւ ցնոր ընտրութիւն՝ կը յանձնուի Հ. Հմայեակի, որ արդէն կարգուած էր փոխ-Տեսչին «ձեռնառու և սատար և օգնական յամենայնի» (հմկ. Հիշում. Արքանօր առ Հ. Օրսենտիոս, 1865 Ապրիլ 2):

3. Ըստ պարունակութեան իր նամակին, (գր. առ Հիւրմիւզեան Արքանօր, 1861 Նոյեմբեր 16), ուր կը յիշատակուի նաեւ Ուսումնապետ կարգուած ըլլալը:

4. Գլխաւոր մատակարարութիւնը Հ. Օրսենտին յանձնուած է, իսկ մասնականը՝ Հ. Գրիգորիսին ըստ հետեւեալ հրահանգին, զոր առաջնոյն կը հաղորդէ Հիւրմ. Աբբասայր այսպէս. «Ի քեզ յանձն է գլխաւոր կամ հանրական մատակարարութիւն դրամական իրաց վարժարանիդ, որպէս Հ. Գրիգորիսի մասնականն, և ի քէն պահանջեսցին հաշիւք» (գր. 1861 Սեպտեմբեր 29): - Այս մասին տես նաեւ Նշանօթ. 1: